Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N 1747 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՄ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի առաջին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ միություն) մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածի 13-րդ կետին համապատասխան՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցների և (կամ) այդպիսի տրանսպորտային միջոցներով փոխադրվող կոնտեյներների գտնվելու վայրի վերաբերյալ երկաթուղային փոխադրողի կողմից մաքսային մարմիններին տեղեկությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցների և (կամ) այդպիսի տրանսպորտային միջոցներով փոխադրվող կոնտեյներների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունները մաքսային մարմիններին են ներկայացվում մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով, իսկ մինչև համակարգում համապատասխան փոփոխությունների իրականացումը՝ էլեկտրոնային այլ եղանակով կամ անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության դեպքերում՝ թղթային եղանակով:

3. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցների և (կամ) այդպիսի տրանսպորտային միջոցներով փոխադրվող կոնտեյներների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով այդպիսի տրանսպորտային միջոցների նկատմամբ

մաքսային հսկողություն իրականացնելու լիազորություններ ունեցող մաքսային մարմինը, մաքսային հսկողության ձևերի կամ մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոցների կիրառման շրջանակներում, համակարգի միջոցով երկաթուղային փոխադրողին է ներկայացնում տեղեկություններ ստանալու վերաբերյալ հայց՝ սույն կարգով հաստատված ձևին համապատասխան:

4. Մինչև համակարգում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված փոփոխությունների իրականացումը մաքսային մարմինների կողմից հայցը ներկայացվում է էլեկտրոնային այլ եղանակով կամ անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության դեպքերում՝ թղթային եղանակով:

5. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված հայցը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) հայցի համարը.

2) հայցն իրականացնող մաքսային մարմնի անվանումը.

3) երկաթուղային փոխադրողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը.

4) տրանսպորտային միջոցի հայտարարագրի գրանցման համարը.

5) երկաթուղային շարժակազմի միավորի, կոնտեյներների նույնականացման համարները.

6) երկաթուղային տրանսպորտի և (կամ) կոնտեյների ժամանակավոր ներմուծման ժամկետը.

7) երկաթուղային փոխադրողի կողմից տեղեկությունների ստացման ժամկետը.

8) երկաթուղային փոխադրողի կողմից հետևյալ տեղեկությունների՝ մաքսային մարմիններին ներկայացման անհրաժեշտությունը՝

ա. ժամանակավոր ներմուծված և միջազգային փոխադրումներ իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի կամ այդպիսի տրանսպորտային միջոցով փոխադրվող կոնտեյների գտնվելու վայրը, փոխադրման տեսակը՝ օրենսգրքի 275-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, իսկ այդպիսի տրանսպորտային միջոցները և (կամ) կոնտեյներներն այլ անձի փոխանցման դեպքում՝ այդպիսի փոխադրողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, փոխանցման

վերաբերյալ ներկայացված ծանուցման համարն ու այն մաքսային մարմնի անվանումը, որին փոխանցվել է ծանուցումը,

բ. ներքին փոխադրումների իրականացման դեպքում՝ ուղարկման և նշանակման կայարանների վերաբերյալ տեղեկություններ:

6. Սույն կարգով նախատեսված հայցն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում երկաթուղային փոխադրողը մաքսային մարմնին է ներկայացնում հետևյալ տեղեկությունները՝

1) մաքսային մարմնի կողմից ստացված հայցի գրանցման համարը.

2) միջազգային փոխադրումներ իրականացնող ժամանակավոր ներմուծված երկաթուղային տրանսպորտային միջոցի և (կամ) այդպիսի տրանսպորտային միջոցով փոխադրվող կոնտեյներների փաստացի գտնվելու վայրի հասցեն, օրենսգրքի 275-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում ներքին փոխադրումների իրականացման դեպքում՝ փոխադրման տեսակը, իսկ օրենսգրքի 275-րդ հոդվածով սահմանված կարգով այդպիսի տրանսպորտային միջոցները և (կամ) կոնտեյներներն այլ անձի փոխանցման դեպքում՝ այդպիսի փոխադրողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, փոխանցման վերաբերյալ ներկայացված ծանուցման համարն ու այն մաքսային մարմնի անվանումը, որին փոխանցվել է ծանուցումը.

3) երկաթուղային տրանսպորտային միջոցի շարժակազմի միավորի, կոնտեյների նույնականացման համարը

4) ներքին փոխադրումների իրականացման դեպքում՝ ուղարկման և նշանակման կայարանները:

7. Երկաթուղային փոխադրողի կողմից սույն կարգի 6-րդ կետին համապատասխան ներկայացված տեղեկությունները գրանցվում են մաքսային մարմնի կողմից ստանալով գրանցման համար՝ «1_____»/«2._____» ձևաչափով, որտեղ՝

1) առաջին բաղադրիչի ներքո լրացվում է գրանցման ամսաթիվը՝ «օր/ամիս/տարի» ձևաչափով.

2) երկրորդ բաղադրիչի ներքո լրացվում է գրանցման հերթական համարը:

Ձև

ՀԱՅՏ

N «_____»/«_____»/«_____»
(մաքսային մարմնի ծածկագիր) (ամսաթիվ) (հերթական համար)

1. Մաքսային մարմնի անվանումը _____
2. Երկաթուղային փոխադրողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը _____
3. Տրանսպորտային միջոցի հայտարարագրի գրանցման համարը _____
4. Երկաթուղային շարժակազմի միավորի, կոնտեյներների նույնականացման համարները _____
5. Երկաթուղային տրանսպորտի և (կամ) կոնտեյների ժամանակավոր ներմուծման ժամկետը _____
6. Երկաթուղային փոխադրողի կողմից տեղեկությունների ստացման ժամկետը _____
7. Պահանջվում է ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝ 1) ժամանակավոր ներմուծված և միջազգային փոխադրումներ իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի կամ այդպիսի տրանսպորտային միջոցով փոխադրվող կոնտեյների գտնվելու վայրը, փոխադրման տեսակը՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի առաջին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 275-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, իսկ

այդպիսի տրանսպորտային միջոցները և (կամ) կոնտեյներներն այլ անձի փոխանցման դեպքում նաև՝ այդպիսի փոխադրողի անվանումը, ՀՎՀՀ-ն, փոխանցման ծանուցման համարն ու մաքսային մարմինը, որին փոխանցվել է ծանուցումը. 2) ներքին փոխադրումների իրականացման դեպքում՝ սկզբնական և նշանակման կայարանների վերաբերյալ տեղեկություններ։

Մաքսային մարմնի ղեկավար կամ նրա կողմից լիազորված անձ

_____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ